ԿՈՇԻ ԿՈԹՈՂԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ

Աշտարակի շրջանի Կոշ գյուղի սահմաններում, խճուղու եզրին վեր է խոյանում մի մենավոր, գեղաքանդակ որմնափակ խաչքար, արժեքավոր ինչպես իր արվեստով ու մոնումենտալությամբ, այնպես էլ կանգնեցման հանգամանքներով և վիմական արձանագրության հարուստ բովանդակությամբ։

Կոթողի ընդհանուր բարձրությունը 6,80 մ է։ Կառուցված է տեղական տուֆ սրբատաշ քարով ու կրաշաղախով։ Բուն խաչքարը և նրա առանձին քարից պատրաստված քիվը վարդագույն տուֆ քարից են, զարդարված երկրաչափական և բուսական նուրբ ու ճոխ քանդակներով։ Կոթողի կտուրը սալածածկ է, հատուկ թեքված դեպի արևելք, որպեսզի անձրևաջրերը չթրջեն նրա քանդակազարդ ճակատը (նկ. 1)[1]։

Նկ. 1. Արագածոտն գավառի ազատագրման առթիվ Պետրոս Ականատեսի կանգնեցրած կոթողը (1195 թ.)

Խաչքարի ճարտարապետականորեն ձևավորված պատվանդանի արևմտյան երեսին, միակտոր քարի վրա պահպանվել է հայոց պատմության համար արժեք ներկայացնող 10 տողանի մի խոշոր արձանագրություն՝ բավականին հողմահարված և տեղ-տեղ էլ ավերված վիճակում։ Սակայն, ցավոք, այդ արձանագրությունը այնքան է խեղաթյուրվել նրա առաջին հրատարակիչների[2] կողմից, որ անիմաստ դառնալով դուրս է մնացել պատմության մասնագետների ուշադրությունից։ Միայն 1958 թ. Ս. Բարխուդարյանը «Ավանգարդ» թերթում տպագրեց այդ արձանագրության մոտավոր բովանդակությունը[3]։

Տեղում մանրամասն ուսումնասիրելով կոթողի հիշյալ արձանագրությունը տարբեր լուսավորության տակ, մեզ հաջողվեց հիմնականում վերականգնել նրա բնագիրը, որն ունի հետևյալ տեսքը (գծանկար և նկ. 2)։

1. «(ԻՈԽԴ)[4]: (=1195 թ.) ես Պետ(րոս) վ(ար)դ(ա)պետ (կ)անգնեց(ի) զ(Քշան)ս երկնաին, զոր յառ–

---

[1] *Կոթողը մասնակիորեն վերանորոգվել է 1948 թ. ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից (այժմ Հայկ. ՍՍՀ պետշինի հուշարձանների պահպանության բաժին)։*

[2] *«Բանասեր» ամսագիր, հատ. Ե, Փարիզ, 1903, էջ 28։ Տե՛ս նաև «Վիմական տարեգիր». Ցուցակ ժողոված արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, ՍՊԲ, 1913, էջ 42։*

[3] *Տե՛ս «Ավանգարդ», 1958, 27 սեպտեմբերի։*

[4] *«Ո» հարյուրավորի ներքևի ստեղները երևում են, տասնավորը վերականգնել ենք «Խ» (40) տառով, որովհետև, ինչպես պարզվում է արձանագրության բովանդակությունից, Պետրոս վարդապետը 1175 թ. իր տեսիլքից քսան տարի անց (այն է՝ 1195 թ.) տեսնում է Զաքարեին և*



Նկ. 2. Պետրոս Ականատեսի կանգնեցրած կոթողի արձանագրությունը

2. ա. տեսա ճոգո ակամբ ՈԻԴ (=1175 թ.) թուին. ի[5] բ(անս երկնի)ց եւ իջանել ամբ
3. լուսեղէն յա(րեւել)ից եւ երեւի նշան(ն) Ա(ստուծո)յ (եւ) զկնի տ(եա)ռըն եւ (բոյոն) ճար-
4. ե(ալ) զխաչէն (եհ)աս զամենայն արար(ածս) եւ մին այդ (տար)ին[6] խաւար-
5. եցաւ արե(գակ)ն եւ(ս) ——եմ[7] (*sic*) (եւ) ղղրեցաւ եր(կի)ր եւ յետ Ի(=20) ամի տես-
6. ի Զաքարէ եւ (Իվանէ որդիք մեծի(ն) Սարգսի, (որ) զնոյն ձեւ եւ
7. զկերպ ունեին (որ) —————— (շնակի)[8] խաչին Ք(րիստոս)ի եւ(ր) բէցաւ[9] երկ-
8. իրս(մե)ր եւ պայ(ծառա)ցան եկեղեցիք Հայաստանեաց: Եւ ար(դ) իմ (կան) զն-
9. եալ զ(ս)ա յարեւշատուբի(ւն) Շահինշա(հի) եւ ի պարծանս մեր եւ երկր-
10. պագուաց ս(որ)ա յաւուր մեծի (գ)ալստեանն Ք(րիստոս)ի *АМЕИ*[10] ամէն»:

Իվանեին Արագածոտնի ազատագրության ժամանակ, հետևաբար, արձանագրության թվականության պակասող տասնավորը պետք է լինի «Խ», որպեսզի համապատասխանի 1175+20=1195 թվականին։

5 *«Ի բանս երկնից» կարելի է հասկանալ «երկնքի խոսքից» կամ «երկնքի խոսքով», թեև այդպիսի դարձվածք հազվագյուտ է հանդիպում։*

6 *Այս բառի «Տ» տառի ներքևի ստեղը երևում է. ուստի բառասկզբի «Տ» տառն անկասկած է։ Այնուհետև մի ավերված տառից հետո գալիս է «ԻՆ»։ Մենք վերականգնեցինք այս բառը «տարին» ձևով, ենթադրելով, որ «ար» կապկիր կարող է լինել։ Այս բառն ամբողջությամբ հնարավոր է կարդալ նաև «տիւն», բայց քանի որ բառավերջի երկու տառերը «ԻՆ» են, մեզ առաջին վերականգնումը ավելի հավանական է թվում։*

7 *Այս բառի սկզբի տառը հնարավոր է կարդալ «Ս» կամ «Ա», որից հետո երկու տառի տեղ ավերված է, իսկ վերջում «ԵՄ», որի վրա պատիվ է դրված։ Հնարավոր է այն ընթերցել «եամ» ձևով, եթե մտածելու լինենք, որ բառավերջի «մ» տառը փակագիր է և նրա մեջ պակասում են «ամր» տառերը, բայց չեն վերականգնվում սկզբի տառերը։*

8 *Այս հատվածում ավերված են առնվազն 7—8 տառեր, որից հետո հազիվ նշմարվում են «շնակի» կամ «շնամկի» տառերը, բայց միտք չի ստացվում։*

9 *«Սրբեցաւ» երկիրս մեր» արտահայտությունը հասկանում ենք «երկիրը թշնամիներից մաքրվեց» և ոչ «սրբացաւ» իմաստով։*

10 *«AMEN» բառի վերջին «N» տառի միջի ստեղը տեղում սխալ է փորագրվել։ Այն պետք է լինի «N», փոխանակ «И»-ի։*

Այժմ տեսնենք, թե ո՞վ է Կոշի այս հոյակապ կոթողի հեղինակ Պետրոս վարդապետը։ Հայ միջնադարյան մատենագիրներից Վարդան Վարդապետը Կոշում հիշյալ է «Կոշայվանքն ուր գերեզմանն է Պետրոս Ականատես սուրբ վարդապետին...»[1], որը և ամենայն հավանականությամբ հանդիսանում է հիշյալ կոթողի արձանագրության մեջ նշված Պետրոս վարդապետը։ Պատմիչի այս վկայությունից դժվար չէ եզրակացնել, որ Պետրոսը «Ականատես» մականունն է ստացել ու հռչակվել 1175 թ. իր վերոհիշյալ տեսիլքի պատճառով։

Կոշավանքում, սակայն, նման գերեզման գոյություն չունի։ Պետրոսի մահարձանը հնարավոր ենք համարում որոնել ոչ թե Կոշի վանքում, այլ նրանից ոչ հեռու գտնվող հանդիպակաց մի բլրի վրա, գյուղի հարավ-արևմտյան կողմում։ Այստեղ մինչև այժմ էլ կանգնած է Պետրոս Ականատեսի 1195 թ. կանգնեցրած որմնափակ խաչքարի մի նմանօրինակը՝ թե՛ իր քանդակային մոտիվներով և թե՛ իր բացարձակ չափերով (նկ. 3)։



Նկ. 3. Պետրոս Ականատեսի կանգնեցրած կոթողի արձանագրության գծանկարը

Անկասկած է, որ երկու կոթողներն էլ միևնույն վարպետի և մոտավորապես նույն ժամանակների գործ են։ Գյուղի տարեց բնակիչների պատմելով, Կոշի այս երկրորդ որմնափակ խաչքարի պատվանդանի արևմտյան երեսին (քարերն այժմ ընկած են, մի մասն էլ անհետացած) փորագրված է եղել արձանագրություն, որը դժբախտաբար չի պահպանվել։

Կոշի այս և Պետրոս Ականատեսի «Հոգու աչքով տեսած» ու կանգնեցրած կոթողների իրար անչափ նմանությունները մեզ թույլ են տալիս ենթադրելու, որ Կոշավանքից ոչ հեռու գտնվող այս երկրորդ որմնափակ խաչքարը հանդիսանում է նրա մահարձան-կոթողը։

1195 թ. Արագածոտն գավառի ազատագրության առթիվ կառուցված կոթողն իր կանգնեցման շարժառիթներով միակը չէ միջնադարյան Հայաստանում։ Նույն Աշտարակի շրջանի Անտառուտ գյուղի սագաշեն եկեղեցու ներսում այժմ էլ պահպանվում է Անբերդ ամրոցը սելջուկ-թուրքերից ազատագրելու առթիվ ամիրսպասալար Զաքարեի 1200 թ. կանգնեցրած ոչ մեծ, բայց գողտրիկ խաչքարը (նկ. 4)։ Հայտնի չէ, սակայն, նրա կանգնեցման նախնական վայրը, բայց բացառված չէ, որ այն դրված է եղել հենց այստեղ, Անտառուտ գյուղի սահմաններում, Անբերդի մատույցներում, ինչպես Պետրոս Ականատեսի 1195 թ. Արագածոտնի ազատագրության առթիվ կանգնեցրած կոթողը, որը նույնպես դրված է ոչ թե Կոշ գյուղում, այլ նրա մատույցներում։

Խաչքարը կերտված է վարդագույն տուֆից և իր ժամանակին հենված է եղել ինչ որ պատվանդանի վրա։ Նրա այժմյան քանդակազարդ պատվանդանը իրեն չի պատկանում, որովհետև այն V դարի մի խոյակ է։ Խաչքարի բարձրությունը 1,40 մ է, լայնքը՝ 0,80 մ, հաստությունը՝ 0,18 մ։ Նրա ներքևում և շրջանակին պահպանվել է ամիրսպասալար Զաքարեի հետևյալ հիշատակագրությունը.

1՝ «Աշխարհացույց Վարդանայ վարդապետի», Փարիզ, 1960, էջ 28։

Նկ. 4. Պետրոս Ականատեսի մահարձան-կոթողը (12—13 դդ.)

Նկ. 5. Զաքարե ամիրսպասալարի Անբերդ ամրոցի ազատագրման առթիվ կանգնեցրած կոթողը (1200 թ.)

«Ի ՈԽԹ (=1200 թ.) թուականուի(ւ)նս. ես Զաքարե ամիրսպասալար Հայոց և Վրաց, որդի մեծի Սարգսի, առի զանառիկ ամրոցս զԱնբերդոյ յաղախնայծին որդոյն ճարարու, որ (առա)յ ի սմա, ի կորուստ քրիստոնեից եւ յաւեր եկեղեցե(ա)ց եւ ետու առնել զնշ(ան)»12:

Զաքարյանների օրոք նման շարժառիթներով հաղթակն. խաչքարեր ու կոթողներ պիտի որ կանգնեցված լինեին նաև Հայաստանի այլ վայրերի ու բերդերի ազատագրության առթիվ, որպիսիք, սակայն, դեռևս մեզ հայտնի չեն։

Ուշագրավ է, որ հաղթական խաչքարեր դրված են եղել նաև բագրատունիների օրոք13։

Արագածոտն գավառի առաջին ազատագրման մասին վկայում է Փարպիի (Աշտարակի շրջան) միանավ բազիլիկ տաճարի արևմտյան մուտքի բարավորին ամիրսպասալար Զաքարեի թողած հետևյալ արձանագրությունը։

1. «Ի թուիս ՈԽ (։1191 թ.)։ Ես Զաքարիա ամիրսպասալար Հաոց և Վրաց
2. աւղնութ(եամ)բն Ք(րիստոս)ի առի զաշխարս ի տանկաց եւ ազատ արարի

12 Նշված ՈԽԹ թվականը խաչքարի կանգնեցման թվականն է. տե՛ս Գ. Հովսեփյան, Բաղրակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ, մաս Ա, Վաղարշապատ, 1928, էջ 8—9։ Ն շ խ ա ր հ ր ե կ Ք ա լ ա ն թ ա ր, Արագածը պատմության մեջ, Երևան, 1935, էջ 25—26։ Ե. Տ ե ր-Մ ի ն ա ս յ ա ն, Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», Ե, 1961, էջ 49։ Ե վ գ ի ն ե Մ ու շ ե ղ յ ա ն, Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1, Երևան, 1964, էջ 52։ «Որդոյն» Գ. Հովսեփյանը, Ա. Քալանթարը և Ե. Մուշեղյանը կարդացել են «որդոցն»։

13 «Յովհաննու կաթողիկուի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 161—162։

3. (ԶՓար)պո իրիցանիս յամենայն հ(ար)կէ։ Ով խափանէ ՅԺԸ
4. (իցըն ն) գովել եղիցի»[14]։

Այս արձանագրությանը որպես շարունակություն խիստ եղծված մի արձանագրություն էլ է պահպանվել (հավանաբար նույն ժամանակներում գրված), որտեղ խոսվում է Շահինշահ Զաքարեի ստացած 4 պատարագների մասին.

«Ի թվիս (Ո)... (Շա)հինշահ որ... ղաւֆ իմ... եցի... անխափան մինչ ի գալուստն Ք(րիս-տոս)ի։ Դ(4) ատր պատարագ լինի Զաք(արիային)»[15]։

Այսպիսով Փարպիի վերոհիշյալ արձանագրությունից պարզվում է, որ Արագածոտն գավառի 1195 թ. ազատագրմանը նախորդել էր ամիրսպասալար Զաքարեի դեպի Արագածոտն կազմակերպած 1191 թ. արշավանքը, որի հետևանքով ազատագրվել էր այն, սակայն այդ ժամանակ Անբերդը, հավանաբար, մնում էր թշնամու ձեռքում, որովհետև 1191 թ. նրա ազատագրման մասին բացի վերոհիշյալից՝ մատենագրական և վիմագրական ոչ մի հիշատակություն չունենք։ Առանց Անբերդը գրավելու Զաքարեի զորքերը չէին կարող երկար ժամանակ ապահով մնալ Արագածոտնում, այդ պատճառով էլ նրանք ստիպված են լինում շուտով հեռանալ այստեղից։

1195 թ., սակայն, երբ հայ-վրացական զորքերը ամիրսպասալար Զաքարեի և Իվանեի գլխավորությամբ երկրորդ անգամ ազատագրում են Արագածոտնը սելջուկ թուրքական տիրապետությունից և երբ նույն այդ թվականին Պետրոս Ականատեսը Կոշ գյուղի մոտ կանգնեցնում է հիշյալ կոթողը, Անբերդն արդեն նույն տարին ազատագրված պետք է լիներ։ Այդ երևում է Պետրոս Ականատեսի 1195 թվակիր արձանագրության «սրբեցաւ երկիրս մեր եւ պայծառացան եկեղեցիք Հայաստանեաց» հատվածից։

Երկրի մաքրման, ազատագրման մասին չէր կարող խոսք լինել, եթե Անբերդում այդ ժամանակ նստած լիներ թշնամին։ Կոշում վերոհիշյալ կոթողի կառուցումն էլ խոսում է մեր այս ենթադրության օգտին։

Անբերդ ամրոցի ազատագրման ժամանակը ըստ Վարդան Վարդապետի և Անանուն պատմիչի 1196 թ. է[16]։ Պետրոս Ականատեսի արձանագրության և պատմիչների վերոհիշյալ վկայությունների Անբերդի ազատագրման ժամանակի այդ մեկ տարվա տարբերությունը հավանաբար հայոց թվականը 552-ով հաշված լինելու պատճառով է առաջացել[17]։ Հնարավոր է, սակայն, որ Արագածոտնը ազատագրվել է 1195 թ. առաջին կեսին, իսկ Անբերդը՝ նույն տարվա վերջին։

Ուշագրավ է Պետրոս Ականատեսի խաչքարի արձանագրության մեկ այլ կողմը։ Նրանում առաջին անգամ ամիրսպասալար Զաքարեն «շահնշահ» է անվանված։ Մինչ այդ Զաքարեն «Ամիրսպասալար» էր անվանված Սանահնի և Փարպիի 1191 թվակիր արձանագրություններում[18]։ Հետաքրքիր է, որ Զաքարեի և Իվանեի հայր ամիրսպասալար Սարգիսը «շահնշահ» չի կոչվել։ Զաքարյաններին «շահնշահ» տիտղոսով պատվել են սկսել 1195 թ., ամիրսպասալար Զաքարեից սկսած և ոչ թե 1199 թ. Անիի գրավումից հետո, ինչպես ենթադրվում էր մինչև հիմա[19]։

Ինչպես վկայում է Վարդան Վարդապետը[20], Անին ազատագրվեց 1199 թ. և այն տրվեց ամիրսպասալար Զաքարեին իբրև սեփականություն։

---

14 «Բանասեր», հատ. Ե, 1904, էջ 30, այստեղ արձանագրության «ՈԽ» թվականը դարձել է «ՈԿ», «զՓարպո իրիցանիս»՝ «...պու...(ա)անիս»։

15 Նույն տեղում, էջ 30, այստեղ արձանագրությունը խիստ թերի է և միացված է նախորդ արձանագրությանը։ «Շահնշահ»-ը հավանաբար Զաքարեի տիտղոսն է։ Բայց թիվը պարզ չէ։

16 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 138, «Անանուն ժամանակագրություն», Երևան, 1940, էջ 19.

17 Հայկական թվականության մասին տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Տարեթվերի և ամսաթվերի գործածությունը հայ մատենագրության մեջ, «Էջմիածին», 1956, № 1, էջ 56—57։

18 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 31, 33, 36, 37, 41։ Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 105—106։ Հոռոմայրի 1187 թվակիր մի արձանագրության մեջ (Վիմական տարեգիր, էջ 36) Զաքարեն «ամիրսպասալար» անվանվելու կապակցությամբ ակադեմիկոս Հ. Մանանդյանը հավանական է համարում այն, որ այդ ժամանակ Զաքարեն և Իվանեն Վրաստանի ամիրսպասալարների օգնականներն էին։ Տե՛ս նրա «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Գ, Երևան, 1952, էջ 126։

19 Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 134։

20 Վարդան Վարդապետ, նույն տեղում, էջ 138։

Վրաց Բասիլի պատմիչի ասելով, «Թամարը գրավված քաղաքներն ու բերդերը իր թագավորությանը չէր միացնում, այլ տալիս էր իր զորավարներին։ Եվ այդ բանի վկան է, ասում է նա, հայոց թագավորների մեծ ու հոյակավոր Անի քաղաքը, որը նա, ինչպես և շահնշահ տիտղոսը, առել էր պարսիկներից»[22]։

Սակայն ինչպես տեսանք Կոշի խաչքարի արձանագրությունից, Զաքարեն «շահնշահ» է անվանված դեռևս 1195 թ. Արագածոտնի և Անբերդի ազատագրումից սկսած։

Զաքարեն «շահնշահ» է անվանված նաև Փարպիի վերոհիշյալ երկրորդ արձանագրության մեջ, որի թվականը թեև չի պահպանված, բայց 1195 թ. ուշ չպետք է լինի։

Հետագայում, 1207—1208 թթ. ծնվում է Զաքարեի անդրանիկ որդին և պապի անունով կոչվում Սարգիս, որը սակայն մեր մատենագրության և նոր պատմության մեջ հայտնի է Շահնշահ անունով։ Սարգիսը «շահնշահ» է կոչվել «ի պատիւ տէրութեան Անւոյ»[23], ինչպես վկայում է Վարդան Վարդապետը։ Ամիրսպասալար և «շահնշահ» Զաքարեի այս որդին վիմական արձանագրություններից հայտնի է «շահնշահ», «շահնշահ Սարգիս», «ամիրսպասալար շահնշահ» և այլ անուններով[24]։

Ամիրսպասալար Զաքարեի «շահնշահ» տիտղոսի երևան գալը դեռևս 1195 թ. մեզ ենթադրել է տալիս, որ Անիի Շեդդադյաններին է պատկանել Արագածոտնը, որի ազատագրումով էլ Զաքարեն փաստորեն յուրացնում է նաև նրանց «շահնշահ» տիտղոսը, իսկ Անիի գրավումով՝ այդ տիտղոսն ավելի է ամրացնում ու դարձնում ժառանգական՝ իր տոհմի համար[25]։

Փարպիի, Կոշի և Անբերդի հիշյալ արձանագրությունները որոշակիորեն ցույց են տալիս, որ Արագածոտն գավառի ազատագրության համար Զաքարյանները տևական ու համառ մարտեր են մղել սելջուկ-թուրքերի դեմ, որոնք վերջնական հաղթությամբ պսակվեցին 1195 թ.։

Արագածոտնի և Անբերդի գրավումը Զաքարյանների առաջին նվաճումներն էին Հայաստանում, որոնք խոշոր ռազմա-ստրատեգիական նշանակություն ունեցան Անիի, Բջնիի և Դվինի հետագա ազատագրման գործում։

---

22 Басили, Памятники эпохи Руставели, перевод Дондуа, Л., 1938, էջ 58—59։ Տե՛ս նաև պրոֆ. Հ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Բ, Երևան, 1936, էջ 34։

22 Տեքստի թարգմանությունը ըստ ակադ. Մանանդյանի, Քննական տեսություն..., հատ. Գ, էջ 134։

23 Վարդան Վարդապետ, Հաւաքումն..., էջ 140, որտեղ պատմիչը հայտնում է, որ 5 տարեկան էր Շահնշահը, երբ 1212 թ. մահանում է ամիրսպասալար Զաքարեն։ Հավանաբար թյուրիմացության արդյունք են «Անանուն ժամանակագրության» այն տողերը, որ իբր 1212 թ. Զաքարեի մահվան ժամանակ նրան «մնաց տղայ մին(—7) ամսոց՝ Շահնշահ անունն»... Տե՛ս «Անանուն ժամանակագրություն», էջ 19։

24 Հ. Ա. Օրբելի, Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Երևան, 1966, էջ 2, 4, 5, 6, 7 և այլն։

25 Անիի Շեդդադյաններին էր պատկանում նաև Դվինը։ Հետաքրքիր է վրաց Բասիլի պատմիչի վերոհիշյալ աշխատության այն վկայությունը, որ Անիի Շեդդադյանները կոչվում էին «պարսիկներ» և «շահնշահ» տիտղոսն ունեին (էջ 58)։